**ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

## ԴԱՒԱՃԱՆՆԵՐԸ ԾԵՐԵՆՑԻ ՊԱՏՄԱՎԷՊԵՐՈՒՄ

*Սոյն յօդուածի նպատակը Ծերենցի «Թորոս Լեւոնի», «Երկունք Թ դարու» եւ «Թէոդորոս Ռշտունի» պատմավէպերում հանդէս բերուած անմիաբան ու հայրենադաւ նախարարների ու հոգեւորականների կերպարների եւ նրանց գործելակերպի համապարփակ վերլուծութիւնն է։*

*Յօդուածի խնդիրը վերոնշեալ վէպերում ներկայացուած դաւաճան կերպարների բարոյահոգեբանական նուրբ, շատ անգամ աննկատ ու ստուերուած խնդիրների վերլուծութեանն առընթեր հայ գրականութեան միւս պատմավիպասանների (Ռաֆֆի, Մուրացան) գործերում եւս նմանօրինակ քստմնելի երեւոյթները յայտնաբերելն ու զուգահեռներ անցկացնելն է։*

*Յօդուածում պատմահամեմատական եւ համադրական մեթոդների հիման վրայ քննութեան են առնուել Ծերենցի երեք պատմավէպերի դաւաճան նախարարների ու հոգեւորականների կերպարները, համեմատուել են Ռաֆֆու եւ Մուրացանի պատմավէպերում նկարագրուող համանման կերպարների հետ եւ ցոյց են տրուել նրանց նմանութիւններն ու տարբերութիւնները։*

*Քննելով դաւաճանութեան հիմնախնդիրը երեք՝ իրարից տարածաժամանակային տարբեր շրջանների վիպասանների գործերում եւ արժանաւորապէս գնահատելով նիւթը մեզնից առաջ ուսումնասիրած նախորդներին, եզրակացնում ենք, որ հայրենիքի անկախութեան եւ ժողովրդի ինքնութեան պահպանման համար կարեւոր են ազգային միասնութիւնը եւ հայրենասիրական վեհ գաղափարներն ընկալելն ու իմաստաւորելը։ Երեք վիպասանների երկերում էլ քիչ չեն ստոր, նիւթապաշտ ու մորթապաշտ հայ դաւաճանները, որոնք, անձնական շահն ու բարեկեցութիւնը գերադասելով ազգայինից ու պետականից, իրենց յուդայական գործունէութեամբ անպատմելի դժբախտութիւններ են բերում հայոց պետականութեանն ու հայրենիքին։ Իսկ հայրենիքի, ժողովրդի, կրօնի ուրացումը, օտար բռնակալների հետ դաշնակցելը՝ հակառակ ժողովրդի շահերի, ծանրագոյն յանցանք է՝ դաւաճանութիւն, եւ արժանի է ամենաանողոք պատժի։*

***Նախաբան***

*Դաւաճանութիւնը չարիքներից մեծագոյնն է, որի առաջին դրսեւորումներին հանդիպում ենք Աստուածաշունչ մատեանի Հին եւ Նոր Կտակարաններում։ Երկու հազար եւ աւելի տարիներ են անցել պատմական այն օրուանից, երբ Յիսուս Քրիստոսի աշակերտներից Յուդա Իսկարիովտացին մատնեց իր ուսուցչին ու մարդկութեան պատմութեան մէջ մնաց որպէս դաւաճանութեան խորհրդանիշ։ Նրա անունից առաջացան «յուդա-դաւաճան», «յուդայաբար», «յուդայական», «յուդայօրէն», «յուդայութիւն» բառերը, որոնք այսօր էլ տրւում են դաւաճանական գործունէութիւն ծաւալող անձանց բնորոշելիս։*

*Հայոց բազմադարեայ պատմութեան մէջ եւս քիչ չեն ստոր, նիւթապաշտ ու մորթապաշտ հայ դաւաճանները, որոնք, անձնական շահն ու բարեկեցութիւնը գերադա-*

*սելով ազգայինից ու պետականից, իրենց յուդայական գործունէութեամբ անպատմելի դժբախտութիւններ են բերել հայոց պետականութեանն ու հայրենիքին։ Նրանցից շատերը դարեր, նոյնիսկ հազարամեակներ շարունակ մեր ժողովրդի յիշողութեան մէջ դաջուել են որպէս դաւաճանութեան խորհրդանիշներ, որոնց անդրադարձել եւ նրանց հանդէպ իրենց խիստ վերաբերմունքն են արտայայտել հայ պատմիչներն ու պատմավիպասանները (Եղիշէ, Ծերենց, Ռաֆֆի, Մուրացան եւ այլք)։*

*Ներկայ հրապարակմամբ փորձել ենք համապարփակ ուշադրութեան արժանացնել Ծերենցի «Թորոս Լեւոնի», «Երկունք Թ դարու» եւ «Թէոդորոս Ռշտունի» պատմավէպերի անմիաբան ու հայրենադաւ նախարարների եւ հոգեւորականների կերպարներին՝ իրենց գործելակերպով։*

### *Դաւաճանների կերպաւորումը «Թորոս Լեւոնի» վէպում*

*«Թորոս Լեւոնի» վէպում Ծերենցը ստեղծել է պատմական ճշմարիտ պատկերներ։ Բիւզանդացիները հայրենիքի դաւաճան հայ իշխանների հետ միասին տիրել էին Կիլիկեան Հայաստանին։ Ժողովուրդն անասելի ծանր զրկանքներ էր կրում թէ՛ օտար նուաճողների եւ թէ՛ ներքին հարստահարիչների ձեռքին։ Հայրենադաւ նախարարներն ու հոգեւորականները բոլորովին անտարբեր վերաբերմունք էին ցուցաբերում ազգային այդ մեծագոյն դժբախտութեան նկատմամբ։ «Կային նաեւ անոնց մէջ այնպիսիներ,- գրում է Ծերենցը,- որ ոչ միայն իրենց ազգութեան պաշտպանութիւնը կ՚արհամարհէին, այլ օտարաց հաճոյ լինելու համար իրենց ազգը արհամարհել, եւ անկից օտարանալն ու զանի հարստահարելն իրենց սովորութիւն ըրած էին»[1]։ Հայ ժողովրդի ազատութեան ու անկախութեան բախտը գտնւում էր մեծագոյն վտանգի առաջ։*

*Պատմական այդ իրադրութեան մէջ Ծերենցը ներկայացնում է Թորոս իշխանի սքանչելի կերպարը՝ որպէս ազգային հերոսի, որպէս մեծ հայրենասէրի, որի միակ բաղձանքը ազատ եւ «զօրաւոր Հայաստան» ստեղծելն էր։ Առ այդ նա իր ամբողջ ուժով պայքարում էր քաղաքական բռնութիւնների ու անարդարութիւնների, ազնուականութեան եւ հոգեւորականութեան դէմ, որոնք ոտնահարում էին ժողովրդի իրաւունքները։*

*Հայրենադաւ իշխանները դեռ Թորոսի հօր՝ Լեւոն թագաւորի գահակալութեան ժամանակներից էին սկսել վարել կենտրոնախոյս քաղաքականութիւն։ Թորոսը ձգտում էր համոզել նրանց հետ կանգնել իրենց դաւաճանական արարքներից եւ ներգրաւել ազատագրական շարժման մէջ, բայց ապարդիւն։ Նրան այդպէս էլ չի յաջողւում փառամոլութեամբ կուրացած իշխանների գութը շարժել եւ հայրենասիրական զգացում ներշնչել։ Նրանց անտարբերութիւնը, սակայն, չի յուսահատեցնում իշխանին. նրան մեծ հաւատ էր ներշնչում ժողովուրդը՝ պատմական մեծ իրադարձութիւնների շարժիչ ուժը։ Թորոսի յանկարծակի երեւալը Կիլիկիայում ալեկոծում, ոտքի է հանում լեռնաբնակներին։ Վերջիններս, ելնելով իրենց տեղերից, թողնելով տուն ու տեղ, գալիս-միանում էին Թորոսին, որպէսզի միացեալ ուժերով պայքարէին արտաքին ու ներքին թշնամու դէմ եւ դարերից եկող վրէժը փոխհատուցէին արեամբ։ Դժգոհում էին Անարզաբայի տիրոջից՝ Սմբատից։ «Վասակի գործ կը կատարէ,- ասում էին Թորոսին,- հարկ-տուրք կ՚առնէ մեզ ու մեր տղաքը անօթի կը մեռցնէ, ի՛նք չի կշտանար... դատ կը հնարէ, սուտ վկայ կը ստեղծէ, որ բանտի, պատժոյ, տուգանքի ճար գտնէ, կաշառք առնէ, արիւն թափէ... Մեր գեղերը քանդուեցան, մեր տուներն աւերակ դարձան, ինք՝*

[1] **Ծերենց**, երկեր, առաջաբանը՝ Վ. Մկրտչեանի, Երեւան, 1957, էջ 105։ Այսուհետ սոյն գրքից մէջբերումների էջերը կը նշուեն մէջբերումից յետոյ՝ փակագծերում։

*պալատներ կը շինէ, պարտէզներ կը շինէ մեր աւերակաց վրայ... մեր լեզուն, մեր հաւատքը հոռոմէն աւելի կը նախատեն, օտարին նախատել կու տան...» (էջ 106)։ Բողոքների այս տարափը ցոյց էր տալիս ոչ միայն օտար նուաճողների գործադրած ահաւոր բռնութիւններն ու կոտորածները, այլ նաեւ հայ իշխանների գործադրած գազանային արարքները սեփական ժողովրդի հանդէպ։*

*Սմբատն ինչպէս պատմական աղբիւրներում, այնպէս էլ վէպում բացարձակապէս չի ընդունում Թորոսի իշխանութիւնը եւ հանդէս է գալիս բիւզանդացիների կողմից, քանի որ բիւզանդահպատակ էր։ Նա դստերը՝ Մարգրիտին, յատուկ նպատակով ամուսնացրել էր Թորոսի եղբօր՝ Ստեփանէի հետ, որը եւս բիւզանդահպատակ էր եւ շարունակում էր աներոջ քաղաքականութիւնը տիրակալման ստատուսը ապահովելու նպատակով[2]։ Վերջինիս սպանութեան պատճառը, ըստ Ծերենցի, նրա այդ տիրակալական իրաւունքների հաստատման ապակողմնորոշումն է, որին եւ խորամանկաբար մղում էին բիւզանդական իշխանաւորները՝ օգտագործելով հայոց թագաւորի եւ իր եղբօր միջեւ առաջացած հակասութիւնները։ Հեղինակը վէպում միանգամայն ճիշտ է կռահել իրողութիւնը, ինչը չի ասում ո՛չ Մատթէոս Ուռհայեցու, ո՛չ էլ Սմբատ պատմագրի կողմից։*

*Վէպի հերոսներից Օշին իշխանը Լաբրոնացու հայրն էր եւ Ներսէս Շնորհալու փեսան։ Ըստ պատմիչների՝ նա եւս բիւզանդական կողմնորոշում ունէր եւ այս ձեւով էր ամրապնդում ու պաշտպանում իր տիրակալական իրաւունքները։ Բիւզանդիայի հոգեւոր ու վարչական մարմինների կողմից սատարուելով՝ նա ուղղակիօրէն խփում էր հայոց պետականութեան ամբողջականութեանը։ Մասուտ քաղաքը ազատագրելու ժամանակ հայ իշխաններից ոմանք հանդէս էին գալիս բիւզանդացիների կողմից, որոնցից մէկը Լամբրոնի տէր Օշինն էր, իսկ միւսը՝ Բարձրաբերդի տէրը՝ Վասիլ իշխանը։ Քաղաքը գրաւելիս հայոց թագաւորը բիւզանդացի բազմաթիւ զինուորների հետ միասին գերի է վերցնում նաեւ հայազգի իշխաններին[3]։ Այս մասին Սմբատ պատմիչը գրում է. «Եւ կալան զտէրն Լամբրոնին զՕշինն, և զտէրն Բարձրբերդոյ զՎասիլն, և զտէրն Պռականու Տիգրանն, որք էին սոքա ի կողմն Յունաց թագավորին, և զթուլամորթ Յոյնսն կալեալ մերկացուցանէին և արձակէին. և տիրեաց Թորոս Մասայ անհոգութեամբ, և ամենայն գաւառացն զոր ունէր»[4]։*

*Հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցութեան արթնացմանը խանգարող, նրան ստրկամտութեան մղող եւ նրա շահերին անհաւատարիմ ու վտանգաւոր դասերից մէկն էլ Ծերենցը համարում էր հոգեւորականութեանը եւ մերկացնում էր վերջինիս հակաժողովրդական գործունէութիւնը։ Չնայած այդ ամէնին՝ յորդորում էր չմոռանալ, որ «...որովայնապարար եւ խաբեբայ եկեղեցականաց քով կան գործունեայ եւ աշխատասէր եկեղեցականք ալ, որ իրենց ազգը եւ ժողովուրդը կը սիրեն եւ գիտեն նաեւ զիրենք անոնց համար զոհել» (էջ 95-96)։*

*Բարձրաստիճան հոգեւորականները, իրենց ընդհանուր շահերից ելնելով, պաշտպանում էին դաւաճան իշխաններին եւ յաճախակի բանակցութիւններ վարում յունաց Կիր Մանուէլ կայսեր հետ՝ հայկական եկեղեցին յունադաւան դարձնելու համար։ Կասկածից վեր է, որ Գրիգորիս (Գրիգոր Գ Պահլաւունի (1113-1166) կաթողիկոսի այդ մարմաջը Թորոսին հաճելի չէր կարող լինել, ուստի Ներսէս Շնորհալու հետ ունեցած*

---

[2] **Զ. Աւետիսեան**, Հայ պատմավէպի պոետիկան, Երեւան, 1986, էջ 56:

[3] Նոյն տեղում, էջ 56-57:

[4] **Սմբատ Սպարապետ**, Տարեգիրք, յառաջաբանը՝ Հ. Ս. Վրդ. Ագրլեանի, Վենետիկ, 1956, էջ 170-171:

զրոյցի ժամանակ նա մեծ սխալ է համարում երկու եկեղեցիների միացումը՝ դրա մէջ տեսնելով սեփական ազգի «սուզման» վտանգը։ «Հայ եկեղեցւոյն փոքր դրօշակը անկախ պահեցէք,- ասում է նա,- ինչպէս ես ազգային անկախութեան դրօշակը անկախ պահելու կը ջանամ» (էջ 191)։

«Թորոս Լեւոնի» վէպում Ծերենցը նաեւ հակադրում է իրար երկու պատմական դէմքերի՝ Թորոսին, եւ եղբօրը՝ Մլեհին։ Վերջինիս վէպում քիչ տեղ է յատկացուած, սակայն որպէս փառասէր եւ անարժան մի անձնաւորութիւն՝ նա գծագրուած է վառ ու տպաւորիչ գոյներով։ Թորոսի եւ Մլեհի միջեւ գոյութիւն ունեցող հակասութիւնները վէպում սրւում են յատկապէս այն ժամանակ, երբ Թորոսը դուրս է գալիս պատերազմական վիճակներից եւ ջանում է երկիրը պահել խաղաղութեան մէջ, երբ չէզոքանում են դրսի վտանգաւոր ուժերը։ Հէնց այստեղ էլ Մլեհը ապստամբում եւ վտանգաւոր է դառնում՝ դաւեր նիւթելով եղբօր դէմ։ «-Բայց ես չեմ ուզեր,- ասում է Թորոսը Մլեհին, որ Ռուբինեաց միջեւ եւ պատմութեան մէջ զրուցուի, թէ եղբօր արեան ձեռք մխեց, ուստի գնա՛ այս երկրէն դուրս, հեռացի՛ր...» (էջ 200)։

Պատկերելով Մլեհին՝ որպէս հայրենիքի դաւաճանի, Ծերենցը նպատակ է դրել դատապարտել աւատական մասնատուածութեան հետեւանք հանդիսացող երկպառակութիւնները եւ առաջ քաշել այն գաղափարը, որ թէ՛ արտաքին եւ ներքին թշնամու, թէ՛ կենտրոնախոյս ուժերի դէմ պայքարի պէտք է դուրս գալ միացեալ ուժերով. միայն համընդհանուր պայքարի միջոցով է հնարաւոր նուաճել ազատութիւնը եւ ասպարէզից վերացնել հասարակութեան համար չարիք հանդիսացող թշնամիներին։

Վիպասանը մի շարք պատկերներում արտացոլել է Մլեհի անմարդկային էութիւնը։ Վերջինս, պահպանելու համար իր հայրական իշխանութիւնը, դժգոհում էր եղբօր հայրենասիրական գործողութիւններից, դաշնակցում էր Հալէպի Նուրեդտին սուլթանի հետ, որպէսզի նրա օժանդակութեամբ կարողանար իրագործել իր ստոր նպատակները։ Ուրանալով ազգն ու հայրենիքը եւ գործիք դառնալով թշնամու ձեռքին՝ նա պատրաստ էր ամէն ստորութեան՝ ընդհուպ մինչեւ եղբօրը սպանելը։ Նրա բոլոր խարդաւանքները, սակայն, անյաջող են անցնում. բանակը ծանր պարտութիւն է կրում, ինքն էլ գերի է վերցուում Թորոսի կողմից։ Մլեհը ցանկանում էր կործանել Թորոսին, բայց ինքն է կործանուում, որովհետեւ չի կամենում հասկանալ եղբօրը եւ նրա մարդկային, բանական վերաբերմունքը փոխհատուցում է դաւաճանութեամբ։

Հայրենիքի, ժողովրդի, կրօնի ուրացումը, օտար բռնակալների հետ դաշնակցելը՝ հակառակ իր ժողովրդի շահերի, ծանրագոյն յանցանք է՝ դաւաճանութիւն, եւ արժանի է ամենաանողոք պատժի. սա է «Թորոս Լեւոնի» վէպի հիմնական գաղափարներից մէկը։ Նոյն գաղափարին մենք հանդիպում ենք նաեւ Րաֆֆու «Դաւիթ Բէկ» վէպում, որում իբրեւ հայրենիքի դաւաճաններ ներկայացուած են Դաւիթ Ուրացողի եւ Մելիք Ֆրանգիւլի կերպարները։ Ինչպէս «Թորոս Լեւոնի» վէպում, այնպէս էլ «Դաւիթ Բէկ»-ում հայրենիքին դաւաճանելու, ժողովրդից խորթանալու արգահատելի վարքագիծը միահիւսւում է նրանց անմարդկային էութեան հետ։ Այստեղ էլ Դաւիթ Ուրացողն է փառասէրի տիպար։ Նա էլ, ինչպէս Մլեհը, անձնական շահերը բարձր է դասում հայրենիքի ու ժողովրդի շահերից եւ պատրաստ է ոտնատակ տալ ամէն մի սրբութիւն իր նպատակների իրագործման համար[5]։ Նա ուրանում է իր կրօնը, իր աղջկան նետում օտար բռնակալի գիրկը եւ պատրաստ է անել քծնանքի ու հաճոյամոլութեան ամէն մի ժեսթ,

[5] Տե՛ս **Ս. Սարինեան**, Րաֆֆի, Երեւան, 1957, էջ 251։

միայն թէ արժանանայ բռնաւորի հովանաւորութեանը եւ նրա միջոցով կարողանայ իրագործել իր փառասիրական տենչերը։ «Ես,- ասում է Դաւիթ Ուրացողը,- եթէ կը ցանկանայի հայ ժողովրդի հետ գործ ունենալ, ոչ այլ կերպ չէի ընդունի, բայց միայն նրա գլուխը լինել եւ ոչ ոքի ստորադրեալը»[6]։ Ինչպէս Մլեհը «Թորոս Լեւոնի» վէպում, ցանկանալով պահպանել իր տոհմական իշխանութիւնը, դիմում էր Հալէպի Նուրեդտին սուլթանի հովանաւորութեանը, այնպէս էլ Մելիք Ֆրանգիւլը «Դաւիթ Բէկ»-ում նոյն նպատակով դիմում է պարսից Ֆաթալի խանի հովանաւորութեանը։ «Ինչ պիտի անես, երբ օտարի, երբ թշնամու ծառայութեան մէջ ես գտնուում... Ես ուրացայ իմ կրօնը, ընդունեցի մահմեդականութիւնը, որ դրանով գրաւեմ իմ թշնամու մտերմութիւնը, որ դրանով աւելի խոր մտնեմ նրա սրտի մէջ, որ կարողանամ նրան իմ ձեռքում պահել։ Այդ բոլորը արեցի ես, միայն նպատակների համար»[7]։

Թէ՛ Ծերենցը եւ թէ՛ Ռաֆֆին ունեն իրենց բարոյախօսական կոնցեպցիան եւ իրենց երկերում ամենուրէք շեշտել են այն, որ հայրենիքի դաւաճանը պէտք է պատժուի, չարութիւնը արժանի է կործանման։ Ուստի ե՛ւ Մլեհը ե՛ւ Մելիք Ֆրանգիւլը կրում են իրենց արժանի պատիժը եւ սպանւում։

### Դաւաճանների կերպաւորումը «Երկունք Թ. Դարու» վէպում

Ծերենցը, ինչպէս «Թորոս Լեւոնի» վէպում Թորոսին, այնպէս էլ «Երկունք»-ում Յովնանին պատկերել է որպէս ռազմական խոշոր գործչի եւ հմուտ զօրավարի, որը Թորոսի նման ամբողջ հոգով ատում էր դաւաճան նախարարներին՝ նրանց անուանելով «բազմագլխեան վիշապ». բարձրաստիճան հոգեւորականութեանն արհամարհում էր՝ նախարարների կենտրոնախոյս ձգտումները չվերացնելու համար, իսկ հասարակ ժողովրդին սիրում էր հոգու պարզութեամբ ու անմիջականութեամբ։ Պատմական դժնդակ պայմաններում Յովնանի առաջ ծառացել էին մեծ դժուարութիւններ, որոնցից ծանրագոյնը աւատական ներքին երկպառակութեան վերացումն էր, որը ջլատել էր երկրի ուժերը եւ նպաստել օտար բռնակալների տիրապետութեան հաստատմանը։ Անշուշտ, բոլոր ուժերի համախմբմամբ թշնամու դէմ պայքարի դուրս գալու պահին էական դեր պիտի կատարեր եւ, ինչպէս ենթադրւում է պատմագիրների բերած փաստերից, կատարել է հայ եկեղեցին այնքանով, որքանով իր շահերը զուգադիպել են ժողովրդի ընդհանուր շահերին ու ձգտումներին։ Բայց արդեօք «Երկունք»-ում հոգեւորականները կանգնա՞ծ են իրենց կոչման բարձրութեան վրայ։

Հոգեւորականութեան մասին խօսելիս Ծերենցը միշտ էլ ժողովրդի եւ հոգեւորականութեան, պետութեան ու եկեղեցու շահերը շփման մէջ է դրել եւ ընդգծել նրանց իրարամերժ դրութիւնը։ Ըստ նրա գլխաւոր կերպար Յովնանի՝ հայ եկեղեցու հոգեւոր ծառաները կարող էին զօրավիգ լինել իրեն՝ նախարարների կենտրոնախոյս ուժերը զսպելու եւ արտաքին թշնամու դէմ ընդհանուր պայքարի դուրս գալու համար, ուստի աշխատում է գործօն դիրքի մէջ դնել հոգեւորականութեանն ու ներգրաւել նրանց ազատագրական շարժման մէջ։ Այդ նպատակով ժողովրդի համար տագնապալի այդ օրերին Յովնանը, կռահելով գալիք վերահաս վտանգը, որոշում է ներկայանալ Դուինում գումարուող վեհաժողովին, որին ներկայ էր նաեւ Ամենայն հայոց կաթողիկոս Յովհաննէս Դրասխանակերտցին։ Յովնանը «Սասնոյ ժողովրդի» անունով թախանձագին խնդրում է կաթողիկոսից՝ «օրհնութեան կոնդակ մը հանել բոլոր Հայաստանի ժո-

[6] **Ռաֆֆի**, Դաւիթ բէկ, Վիեննա, 1903, էջ 449:

[7] Նոյն տեղում, էջ 682-683:

*ղովրդոց, զէն ի ձեռքին յարձակելու ընդդէմ անօրինաց, որ կը պատրաստուին մտնել աշխարհքս բնաջինջ ընելու համար քրիստոնէութեան եւ հայութեան անունը, կը հրաւիրէ իւր սրբութիւնը գալ բնակելու Ս. Կարապետի վանքը մինչեւ պատերազմի վերջը» (էջ 275)։*

*Յովնանի խիզախ ու համարձակ առաջարկութիւնը խիստ զայրոյթ է պատճառում կաթողիկոսին եւ հայրենադաւ նախարարներին. նրանք վախենում էին, որ ժողովուրդը մի օր ապստամբութեան դրօշ կը բարձրացնի նաեւ իրենց դէմ, այդ պատճառով մերժողական պատասխան են տալիս։ Յովնանը «անխռով եւ անսասան՝ բայց տխուր վասնզի չի կրցաւ շարժել եկեղեցական խումբը՝ ուսկից ինք յենակէտ մը շինել կը յուսար» (էջ 277), հեռանում է վեհաժողովից՝ հայրենի երկիրը պաշտպանելու համաժողովրդական վճռականութեամբ։*

*Եթէ եկեղեցին իր բարձրութեան վրայ կանգնած լինէր եւ համագործակցէր հայ աշխարհիկ իշխանութեան հետ, եւ եթէ չլինէին նախարարական տների կենտրոնական իշխանութեանը հակադրուելու, նոյնիսկ նրան դաւաճանելու փորձերը, ապա այդ դէպքում տեղի չէին ունենայ այնքան մեծ արիւնահեղութիւններ, եւ ժողովուրդը չէր կորցնի իր քաղաքական անկախութիւնը։ «Եթէ կաթողիկոսը միայն ուզէր շարժիլ, եթէ իմ խորհրդոյս ուզէր հետեւիլ, գար Ս. Կարապետ, հանէր ոտք եկեղեցական բանակը, ժողովրդոց բանակը հարիւր հազարներով կը կանգնէր անմիջապէս,- ասում է Յովնանը,- եւ մենք հայքս ան ատեն ոչ վատ կը լինէինք, ոչ անմիաբան, ոչ նախանձոտ, այլ քարով միայն զինեալ՝ շուներու պէս կը հալածէինք թշնամին, որուն անարգ ոտից տակ կը հեծեն գերութեամբ մեր զաւակները, մեր կանայքը, մեր իշխանքը, մեր եկեղեցին, մեր հաւատքը...» (էջ 279)։*

*Մեծ խելքի եւ հզօր կամքի տէր զինուորականը խորապէս ըմբռնում էր, որ ո՛չ դաւաճան իշխանները եւ ո՛չ էլ կաթողիկոսը ազգին օգտակար լինել չէին կարող, հետեւաբար պէտք էր դիմադարձ լինել նրանցից եւ ապաւինել ժողովրդին։ Այդ ժողովը Յովնանի համար մեծ դաս եղաւ. նա այնտեղ տեսաւ մարդկային յարաբերութիւնների ամբողջ քաոսը, բարձր խաւերի քար անտարբերութիւնը ժողովրդի ճակատագրի հանդէպ, նրանց երեսպաշտութիւնն ու բարոյական անկումը։ «Դու Ղեւոնդ մը միայն գտիր,- ասում էր Գուրգէն իշխանը Յովնանին,- ես քեզի տասը Վարդան կը գտնեմ» (էջ 270), «Ղեւո՜նդ, Ղեւո՜նդ, ո՜ւր ես,- բացականչում է Յովնանը,- Հայաստան քեզ պէս մեծ մարդ, մեծ քահանայ, մեծ Քրիստոսի ծառայ մէկ հատ մը միայն բերաւ, ափսո՜ս, և հոն իւր ծննդական կարողութիւնը դադրեցաւ» (էջ 276-277)։*

*Ծերենցը ճիշտ չէր, երբ համաժողովրդական ազատագրական շարժման մէջ վճռական ուժը համարում էր հոգեւորականութեանը, իսկ Վարդան Մամիկոնեանի նման հայրենիքի եւ ժողովրդի ազատութեան վեհ գործին նուիրուած անձնուէր զօրավարին մղում յետին պլան։ Սակայն դժուար չէ բացատրել, ինչպէս Պետրոս Ադամեանը կ'ասէր՝ «պատկառելի վիպասանի»[8] այդ մօտեցումը։ Նրա համոզմամբ, երբ ազգային ինքնուրոյն պետականութեան ստեղծման ենթարկուած զէնքը, իբրեւ զինակից, ստանում է նաեւ խաչը, դառնում է հզօրութիւն, անքակտելիութիւն, ուստի եւ կռուան՝ օտար ներխուժող ուժերի դէմ կռուելու համար։*

*Վիպասանը Յովհաննէս կաթողիկոսին ներկայացրել է որպէս վերին աստիճա-*

[8] **Պ. Ադամեան**, Առ պատկառելին Ծերենց. իւր վաղամեռիկ եւ բարեյիշատակ դուստր. Տիկին Թագուհի Մելիք-Ազարեանցի մահուան առթիւ. Իմբնագիր, ԳԱԹ, Ծերենցի ֆոնդ, 51։

*նի թուլական մի մարդ, որը, հայրենիքին նուիրուած լինելով հանդերձ, չի կարողացել նրա համար որեւէ օգտակար գործ կատարել։ Երբ երկիրը տագնապի մէջ էր, նա շարունակ փախչում էր աթոռանիստ քաղաքից եւ ոչ մի վճռական քայլի չէր դիմում ժողովրդին օրհասական վտանգից փրկելու համար, այլ մտածում էր միայն իր անձի մասին։ «Դուին քաղաքը այն ժամանակ Հայաստանի մայրաքաղաք՝ գրեթէ 200.000 եւ աւելի բնակիչ ունէր, երեւելի իւր ոստիկանաց պալատով, կաթողիկոսարանով եւ մայր եկեղեցիով,- գրում է Ծերենցը,- թէպէտ կաթողիկոսը հոն բնակելու չէր համարձակեր արաբացի իշխանին երկիւղէն»։ Ըստ նրա՝ «Ամէն բան եւ ջանք ուշ էր, միմիայն ճամբայ խոհեմութեամբ թշնամւոյն հետ վարուիլն էր եւ նորա շարութիւնն քաղցրացնել» (էջ 369)։*

*Հետաքրքրականն այն է, որ «Գէորգ Մարզպետունի» վէպում նոյնպէս Յովհաննէս կաթողիկոսը պատկերուած է բացասական գծերով։ Նրա թուլամորթութիւնը, երկչոտութիւնը հետեւեալ կերպ է բնութագրել Մուրացանը. «Նրա բարեկազմ, յաղթանդամ եւ արտաքուստ զօրաւոր մարմնի մէջ ապրում էր մի տկար սիրտ եւ երկչոտ հոգի»[9]։*

*Յովհաննէս կաթողիկոսը ազգի օգտին երբեմն գործում էր բարիքներ՝ «միայն փառք վաստակելու» համար, բայց «արգելք չէր դնում հասնող չարիքներին»[10],- գրում է Մուրացանը։ Նոյն միտքը արտայայտում է նաեւ Ծերենցը «Երկունք»-ում՝ ասելով, որ նախորդ կաթողիկոսի մահից յետոյ նորն է ընտրւում աշխարհական Զաքարիան, «որուն առաքինութիւնը եւ անձնուրացութիւնը յայտնի էր ամէնուն. վասնզի Հայաստան ձանձրացեր էր այդ անտարբեր, թուլամորթ հայրապետներէն, որ իրենց հանգըստութիւնը միայն կը ճանաչէին եւ կը փնտռէին» (էջ 369)։ «Երկուսն էլ,- գրում է Ա. Տէրտէրեանը,- թէ՛ Ծերենցը եւ թէ՛ Մուրացանը եկեղեցական իշխանութիւնն իջեցնում են «երկնային» բարձունքից, սակայն Մուրացանի զէնքը շատ աւելի թունաւոր էր, քան Ծերենցինը, որովհետեւ նա սատիրա է բանեցրել Յովհաննէս կաթողիկոսի դէմ»[11]։*

*Երկու վիպասաններն էլ փորձել են ընդհանրապէս առաջադէմ հոգեւորականութեան դերը չժխտել, աւելին՝ նրանք ցանկացել են «Մի հօտ եւ մի հովիւ» գաղափարը դարձնել համաժողովրդական շարժման գլխաւոր ուժը ամբողջ ազգի վրայ, որը պիտի ամրապնդէր պետական մտածողութիւնն ու ազգային ինքնագիտակցութիւնը։ Սակայն նրանց յոյսերը չեն արդարանում։*

*Ի տարբերութիւն Ծերենցի եւ Մուրացանի՝ Ռաֆֆին «Դաւիթ Բէկ» վէպում բարձրացնում է հայ հոգեւորականութեան անունը եւ Յովհաննէս կաթողիկոսի թուլական կերպարին հակադրում հայրենասէր Ներսէս Արքեպիսկոպոսի կերպարը։ Որպէս անկախութեան պահպանման գլխաւոր նախապայման՝ Ներսէս Արքեպիսկոպոսն առաջադրում է ազգային միասնութեան գաղափարը, ինչը անում էին Թորոսը «Թորոս Լեւոնի» վէպում եւ Յովնանը՝ «Երկունք»-ում։*

*«Ո՛ւր որ հայ կայ, պէտք է միաբանին,- ասում է նա Գուրգէն իշխանին,- եւ առանց նախարարաց իրենց գլխուն ճարը տեսնեն, ան ատեն թերեւս հայ ազգը իր փրկութիւն գտնէ» (էջ 218)։ Մուրացանի հերոսը եւս առաջ է քաշում ազգի միասնական ուժերի համախմբման գաղափարը՝ որպէս երկրի փրկութեան միակ երաշխիք. «Երկրի փրկութիւնը,- ասում է Գէորգ Մարզպետունին,- կախուած է այժմ իշխանների միութիւնից եւ*

---

[9] **Մուրացան**, Գէորգ Մարզպետունի, Հայ դասականների գրադարան, Երեւան, 1977, էջ 182:

[10] Նոյն տեղում, էջ 183:

[11] **Ա. Տէրտէրեան**, Հայ կլասիկներ, Երեւան, 1944, էջ 102:

*այդ միութիւնը պէտք է ստեղծել՝ զոհաբերութեան ի՛նչ գնով ուզում է լինի»[12]։*

*Միաբանութեան իտէալը Ծերենցի վէպերում առանձնակի նշանակութեամբ էր շեշտւում, քանի որ հեղինակն արդէն յայտնաբերել էր այն չարիքը՝ երկպառակութիւնն ու անմիաբանութիւնը, որը պատճառ էր դարձել հայկական պետականութեան անկման։ Ռաֆֆին եւ Մուրացանը եւս իրենց վէպերում հայ ժողովրդի դժբախտութեան հիմնական պատճառը համարել են երկրի ներքին երկպառակութիւնը, աւատական մասնատուածութիւնն ու նախարարների անմիաբանութիւնը։ Երեք հեղինակներն էլ խստօրէն ձաղկել են դաւաճանութիւնն ու անմիաբանութիւնը եւ դրանց հակադրել հայրենասիրութեան ամբողջ վեհութիւնը՝ առաջադրելով ազգային միասնութեան գաղափարը՝ իբրեւ հայրենիքի անկախութեան ու ժողովրդի ինքնութեան պահպանման կարեւորագոյն նախապայման։ Եթէ հայրենասիրութիւնը, ըստ վիպասանների, գերագոյն առաքինութիւն է եւ արժանի է փառաբանման ու դրուատման, ապա անմիաբանութիւնը չարիք է ժողովրդի համար, իսկ դաւաճանութիւնը յանցանքներից ծանրագոյնն է։ Ով դաւաճանում է հայրենիքին եւ պաշտպանում է թշնամուն, նա ամենամեծ ոճրագործն է եւ արժանի է ամենաանողոք պատժի։*

*Ինչպէս «Թորոս Լեւոնի»-ում, այնպէս էլ «Երկունք»-ում Ծերենցը դարձեալ անողոք քննադատութեան է ենթարկում այն նախարարական տներին, որոնք, ելնելով իրենց շահերից, դաշնակցում են թշնամու հետ եւ իրենց վարքագծով խանգարում երկրի առաջադէմ ուժերի համախմբմանը։ Նրանք ոչ մի մասնակցութիւն չեն ցուցաբերում ազատագրական շարժմանը. իւրաքանչիւրը մտածում ու գործում է իւրովի. ոմանք, փառասիրական տենչից դրդուած, համագործակցում էին թշնամու հետ, միւսները՝ փառաբանում եւ արդարացնում արաբների նուաճողական քաղաքականութիւնը, երրորդները՝ չէզոք դիրք գրաւում։ Բնական է, որ նախարարական տների այսպիսի մասնատուածութիւնը, նրանց հակամարտ շահերն ու կենտրոնախոյս ձգտումները պարարտ հող էին ստեղծելու թշնամու ծրագրերի իրականացման համար։ «Օտար թագաւորներից «բազմականգուն տիտղոսներ» ստանալով,- գրում է Ա. Տէրտէրեանը,- դաւաճանները՝ բոլոր այդ Մերուժանները, Վասակները, Գդիհոնները, պատճառ են դարձել ժողովրդի արեան թափուելուն կամ նրա գերութեանը»[13]։*

*Վէպում Յովնանի եւ Խոսրով իշխանի երկխօսութեան միջոցով հեղինակը ընթերցողի համար որոշակի է դարձնում դաւաճան իշխանների հետապնդած նպատակների եւ նրանց արարքների ազգադաւ էութիւնը։ Մերկացնում էր նաեւ նախարարներին, որոնք թշնամու բարբարոսական արշաւանքների ժամանակ փախչում էին իրենց ամրոցները եւ վտանգի պահին ոչ մի օժանդակութիւն ցոյց չէին տալիս ժողովրդին։ «Վերէն կը նային թէ անօրէնը ի՞նչ կ՚ընէ,- ասում է Կարապետը,- ի՞նչպէս կը սպաննէ, ի՞նչպէս գերի կը տանի, ի՞նչպէս կ՚այրէ, ի՞նչպէս կը յափշտակէ։ Եւ երբ նա կ՚երթայ, կ՚իջնեն իրենց ծակերէն, ժողովուրդը կը կսկծան եւ կը յորդորեն, որ նորէն ցանեն, նորէն հնձեն, նորէն շինեն, ահա մեր վիճակը» (էջ 249)։*

*Արաբ բռնակալների ասպատակութիւնների ժամանակ իշխանական դասի այդօրինակ վերաբերմունքի մասին բացասաբար է արտայայտուել նաեւ Մուրացանն իր «Գէորգ Մարզպետունի» պատմավէպում։ Նա նոյնպէս խստօրէն քննադատում է դաւաճան նախարարների հակամարդկային էութիւնը, նրանց բարոյական այլասեր-*

---

[12] **Մուրացան**, Գէորգ Մարզպետունի, Հայ դասականների գրադարան, Երեւան, 1977, էջ 217։

[13] **Ա. Տէրտէրեան**, Հայ կլասիկներ, Երեւան, 1944, էջ 102։

*ւածութիւնը, փառասիրութիւնը, ժողովրդի բախտի ու ճակատագրի հանդէպ նրանց ցուցաբերած անտարբեր վերաբերմունքը։ «Մենք ոչինչ չենք անում,- ասում է խորապէս զայրացած Մարզպետունին կաթողիկոսին,- կամ անում ենք այն, ինչ որ ամօթ եւ նախատինք է բերում հայ անունը։ Մենք քաշուել, նստել ենք մեր բերդերում, շրջապատել ենք մեզ պահակ գնդերով, ապահովել ենք թշնամու յարձակումից, իսկ ժողովուրդն ու եկեղեցիները թողել անտերունչ, անպաշտպան, կամ աւելի ճիշդն ասած, մատնել նրանց թշնամու սրին...»[14]։*

*Ռաֆֆին եւս իր «Խենթը» վէպում դատապարտել է կղերականութեան ու աւատական վերնախաւի անտարբեր վերաբերմունքը սեփական ժողովրդի եւ հայրենիքի հանդէպ. «Նայեցէ՛ք, նայեցէ՛ք...,- ասում է Վարդանը,- տունը աչքի առջեւ այրում են, զաւակները կրակի մէջ խորովում են, կինը, աղջիկը քաշում տանում են... Տղամարդը տեսնում է այդ բոլորը եւ ինքը ամենայն խոնարհութեամբ պարանոցը դէմ է անում թշնամու սրին... Տօ, անիծեալ, դու էլ մարդ ես, դու էլ սպանիր, յետոյ մեռիր...»[15]։*

*«Երկունք»-ի դաւաճան իշխաններ Մուշեղ Վահեւունին, Վահրամ Տրունին եւ Վահրամ Գնունին թշնամու բանակի մէջ բարձր դիրք էին գրաւում եւ հանդէս էին գալիս իբրեւ Բուղայի հաւատարիմ ծառաներ ու գործակալներ։ «Սոքա երեքը,- գրում է Ծերենցը,- միաբան գրեալ եւ կնքեալ նամակով առ Բուղա մատնեցին իրենց իշխանը Աշոտ Արծրունի ի կապանս եւ ի գերութիւն, եւ Վասպուրական երկիրն ի հուր եւ ի սուր» (էջ 324)։ Բուղային ուղղուած դաւաճան իշխանների նամակի բովանդակութիւնը տալիս է Թովմա Արծրունին, որից էլ օգտուել է Ծերենցը. «Եւ արդ մենք՝ Վասպուրականի ազատների ու իշխանների նահապետներս, Վահեւունեաց տոհմից Մուշեղը, Տրունեաց տոհմից Վահրամը, միւս Վահրամը, որը եւ իշխանի թիկնապահն է, եւ բազում ուրիշ ազատներ ու պետութեան զօրականներ, որոնց ձեռքն է մեր աշխարհի հոգաբարձութիւնը, գրեցինք քեզ, Բուղա, արաբացոց զօրապետների գլխաւոր եւ բարձակից մեծն թագաւորի։ Միայն թէ ազատ արձակի մեզ եւ մեր ազգատոհմին մեր տները եւ թոյլ տուր իւրաքանչիւրիս խաղաղ ապրելու այնտեղ։ Մենք Աշոտին կու տանք քո ձեռքը, առանց զէնքի, մարտի ու ճակատ կազմելու, եւ չես չարչարուի նրա պատճառով»[16]։*

*Վէպի՝ «Աշոտ Արծրունի եւ դաւաճանք», «Վրէժ», «Դարան» գլուխներն ամբողջութեամբ խարսխուած են այս փաստի վրայ։*

*Փառասէր, գոռոզ ու իշխանատենչ նախարարները, դառնալով Բուղայի հայաջինջ քաղաքականութեան պաշտպանն ու հովանաւորը, մինչեւ վերջ էլ մնում են հաւատարիմ իրենց գլխաւորած հակահայրենասիրական հոսանքի հակաժողովրդական բնոյթին։ Սակայն Բուղայի դէմ տարած յաղթանակից յետոյ Յովնանի առաջ ծառացել էր մի դժուարին հարց՝ շուտափոյթ յայտնաբերել դաւաճաններին, բանտարկել եւ դատաստան տեսնել նրանց հետ։ Եթէ միւս երկու մատնիչ իշխանները տակաւին յայտնաբերուած չէին, ապա Մուշեղ Վահեւունին՝ «այդ չարագործը, այդ արիւնարբու գազանը, որ բոլոր Վասպուրական արեան եւ սուգի համակեց» (էջ 314), ինչպէս ճիշտ բնութագրել է նրան հեղինակը, իւրացրել էր քծնանքի եւ կեղծիքի բոլոր նրբութիւնները, նպատակին հասնելու միջոցների անխտրականութիւնը, դաւելու հնարքները։ Դաւաճանը հասկանում էր իր վիճակի անելանելիութիւնը. համոզուած էր, որ մինչեւ միւս մատնիչ իշխան-*

---

[14] **Մուրացան**, Գէորգ Մարզպետունի, Հայ դասականների գրադարան, Երեւան, 1977, էջ 214:

[15] **Ռաֆֆի**, Խենթը, Արկածներ վերջին ռուս-թուրքական պատերազմից, Պոսթրն, 1937, էջ 10:

[16] **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն Արծրունեաց տան, ներածութիւնը, թարգմանութիւնը եւ ծանոթագրութիւնները Վ. Վարդանեանի, Երեւան, 1978, էջ 150:

*ների ձերբակալումը մնացել են հաշուած ժամեր։ Ի՞նչ անել, ինչպէ՞ս դուրս գալ այդ դրութիւնից։ Նա գիտէր, որ արդարանալու որեւէ միջոց չունի, անզօր է, այլեւս չի կարող կեղծել եւ ժողովրդից թաքցնել իր կատարած արարքները։*

*Շուտով հայրենիքի դաւաճան այդ երեք իշխանները, որոնք «զինուորական օրինաց մատնիչ եղան վատութեամբ, տիրադաւ եղան իրենց տէրը մատնեցին, իրենց բարերարներու երախտեաց ապերախտութեամբ պատասխանեցին» (էջ 321), կանգնում են ժողովրդական դատարանի առջեւ, որպէսզի պատասխան տան իրենց ազգադաւ գործունէութեան համար։ Վերջիններս խորամանկութեամբ ձգտում էին քօղարկել բոլոր այն չարագործութիւնները, որ կատարել էին իրենց ձեռքերով, եւ ամբաստանում էին Յովնանին՝ «իբրեւ խարդախի եւ դաւաճանի, որ իրենց կենաց դէմ թշնամութեամբ գրգռուած՝ ո՛ գիտէ ուստի, զիրենք կապանաց եւ բանտի մատներ էր ամենայն դիւական նենգութեամբ» (էջ 321)։ Բայց Յովնանի բնածին խելքն ու զգուշութիւնը նրանց փաստի առաջ են կանգնեցնում եւ բացայայտում նրանց հոգու ամբողջ գարշելիութիւնը։ Մի ակնթարթ նա վերյիշում է բազմաթիւ գիւղերի ու քաղաքների աւերումն ու կողոպուտը, անմեղ ժողովրդի գերեվարումը, բազում զինակից ընկերների կորուստը եւ շատ ու շատ այլ սարսափելի տեսարաններ, որոնք դաւաճանների մատնութեան հետեւանքներն էին։ «Կրնայի զիրենք կախել առաջին փայտէն... բայց չուզեցի... որովհետեւ գրուած է. Մի՛ սպանանէր, այլ դատէ եւ դատապարտէ» (էջ 322)։*

*Եւ ահա Խութեցու մէջ բորբոքւում է ցասման հուրը։ Նա շատ կտրուկ, վճռական հրամայում է հրապարակայնօրէն դատել եւ տալ նրանց արժանի պատիժը։ Բոլոր ներկաները, աջ ձեռքները Աւետարանի վրայ դրած, ձախը՝ սրտներին, խոստովանում էին, թէ «յանցաւոր եւ մատնիչ էին՝ հաւասար ուրացելոցն Մերուժանայ Արծրունւոյ եւ Վասակայ Սիւնւոյ եւ Յուդա Իսկարիովտացւոյ» (էջ 323), ապա միահամուռ ընդունելով Յովնանի որոշումը՝ վճռում են. «Մենք զիրենք արժանի դատեցինք մահու եւ այս վճռին ու նրա գործադրութիւնը յանձնեցինք Յովնանու Խութեցւոյ,- ասում են լեռների պարզամիտ գիւղացիները,- որ ո՛ւր տեղ եւ ո՛ր կողմ արժան եւ հարմար դատի՝ այս մեր պատժոյ վճիռն ի գործ դնէ յօրինակ եւ ի զգուշութիւն չարագործաց եւ միամտաց» (էջ 324)։*

*Պատմաբան Լէոն, իր «Ռուսահայոց գրականութիւնը» նշանաւոր աշխատութեան մէջ քննելով Ծերենցի վէպերը, կարծում է, որ գրողը բոլորովին անտեղի է ներկայացրել այդ դատը. «Մենք տեսնում ենք Հայաստանի լեռներում եւրոպական մի դատարան իր բոլոր ձեւականութիւններով։ Եւ այս անպատեհութեան պատճառը հասկանալի է. Ծերենց, ինչպէս ասացինք, մի անկախ ազգի առաջնակարգ գործը որոշ օրենսդրութիւնն է համարում։ Եւ ահա իր այդ գաղափարը նա գործադրել է տալիս իր գլխաւոր հերոսի միջոցով, որ առհասարակ նրա բոլոր աշխարհայեցողութիւնների համագումարն է ներկայացնում»[17]։ Սակայն, ինչպէս իրաւացիօրէն նկատել է Ա. Տէրտէրեանը, «թէ՛ Յովնանը եւ թէ՛ հեղինակը խնդրին նայել են դաստիարակչական տեսակէտից։ Դաւաճաններին «ոչ միայն պէտք է յիշել,- ասում է Ծերենցը,- այլ նաեւ կրակով գրել, ժայռերու վրայ փորագրել, մանր եւ փոքրիկ տղայոց ուսուցանել, որ նոցա անունը նզովեն եւ նոցա օրինակին քստմնել սովրեն եւ մեծ հասակաւոր մարդիկ առաջին առթիւ զանոնք պատուհասեն»[18]։*

---

[17] **Լէո**, Ռուսահայոց գրականութիւնը սկզբից մինչեւ մեր օրերը, Վենետիկ, 1904, էջ 270:

[18] **Ա. Տէրտէրեան**, Հայ կլասիկներ, Երեւան, 1944, էջ 108:

*Ինչպէս տեսնում ենք, դաւաճան նախարարների վարքագիծը թէ՛ Ծերենցի, թէ՛ Մուրացանի եւ թէ՛ Րաֆֆու ստեղծագործութիւններում խիստ քննադատութեան է ենթարկուած։ Նրանք երեքն էլ հայ գրականութեան եւ հասարակական մտքի պատմութեան մէջ մեծ հետաքրքրութիւն հանդէս բերեցին դէպի պատմական անցեալը եւ ցոյց տուեցին հակադիր դասերի ու դասակարգերի միջեւ եղած խոր հակասութիւնը, պատռեցին քամահրանքի քօղը, որով պարուրուած էին ազնուականների անմարդկային արարքները տուեալ դարաշրջանում։*

*Ազնուական դասի քննադատութեան, հասարակական այդ կարեւոր խնդրի հասկացողութիւնը ժողովրդի եւ իշխանական դասի միջեւ գոյութիւն ունեցող անհաւասարութեան վերացումն է եւ հասարակ մարդկանց հասարակական ու քաղաքական իրաւունքների ճանաչումը, այսինքն՝ հասարակութեան անդամների իրաւահաւասարութեան հաստատումը։ Այստեղից էլ բխում են երկու մեծ վիպասանների ժողովրդասիրութիւնն ու մարդասիրութիւնը։ Այս եւ համանման շատ գծերով էլ մօտ են իրար գեղարուեստական մտքի այդ երկու կարկառուն ներկայացուցիչները։*

### *Դաւաճանների կերպաւորումը «Թէոդորոս Ռշտունի» վէպում*

*«Թէոդորոս Ռշտունի» վէպում Ծերենցը դիմել է հայոց պատմութեան մի ծանր եւ անյուսալի ժամանակաշրջանի, երբ պարսկական ու բիւզանդական իշխանութիւնների տակ հեծող Հայաստանը քայքայուած ու կազմալուծուած վիճակով ենթարկւում էր արաբական արշաւանքներին։ Այստեղ եւս Ծերենցը մեծ դեր է յատկացրել հայ վերնախաւի՝ նախարարների, բարձրաստիճան հոգեւորականների եւ ժողովրդի միջեւ եղած յարաբերութիւնների բնութագրմանը։ Ցոյց տալով ազատագրական շարժման ընթացքում ազնուականների մի որոշ մասի կատարած դրական դերը՝ վիպասանը չի քօղարկում նախարարների պառակտողական, քայքայիչ գործողութիւնները։ Ծերենցը սպառիչ համոզչութեամբ նկարագրում է ազգադաւ նախարարների վարած քաղաքականութեան բացասական էութիւնը։ Հայրենադաւ իշխանները, ըստ Ծերենցի, յանցագործներ են, որոնք, գաղտնի կապերի մէջ մտնելով արաբական ու բիւզանդական վերնախաւի ներկայացուցիչների հետ, բացայայտօրէն դաւաճանում են ժողովրդին, ոտնահարում նրա կենսական շահերը։ Ազգային արժանապատուութիւնից զուրկ այդ իշխաններն իրենց գործունէութեամբ հանդէս են գալիս ոչ միայն որպէս ժողովրդի թշնամիներ, այլեւ նրանք, շատ յաճախ նախանձութիւնից դրդուած, միմեանց դէմ են դուրս գալիս. «Նախարարք եւ իշխանք հարստահարող, կասկածոտ, տգէտ, նախանձոտ միմեանց դէմ» (էջ 537)։*

*Ազգադաւ նախարարների նկատմամբ հեղինակի ունեցած այսօրինակ վերաբերմունքն արտայայտւում է վէպի բազմաթիւ էջերում. այդ երեւոյթը նրա բոլոր երկերում բացայայտուած է վարպետօրէն, ուժեղ եւ անհերքելի մերկացումներով։ Ծերենցը ցոյց է տալիս, որ հայրենադաւ իշխանների ամէն մի արարք, համագործակցութիւն օտար նուաճողների հետ, մի նոր դժբախտութիւն էին բերում ժողովրդին, թէ ինչպէս այդ բոլորին աւելանում էին նաեւ ներքին տիրապետող դասերի կամայականութիւններն ու բռնութիւնները բուն ժողովրդի մէջ, որն ստեղծում էր ընդհանուր ատելութիւն դէպի այդ ներքին հարստահարիչները, դէպի այն ամէնը, ինչը երաշխաւորւում էր իշխող վերնախաւի անսանձ կամայականութեան բռնի շահագործմամբ։ «Ինչպէս բնական է ազնուատոհմութեանց,- գրում է վիպասանը,- ամէն տեղ արհամարհ աչօք նայիլ հասարակ ժողովրդեան վրայ եւ հարստահարել, նոյնը սովորաբար կ՚ընէին հայոց նախարարք եւ*

*ազատք։ Վասնզի այդ երրորդ մասը՝ ժողովուրդը, որուն մէկ իրաւունքը չիշուիր մէկ տեղ մը, չի կար հաստատութիւն մը, որուն վրայ ինք յենուէր, չի կար կազմակերպեալ օրէնք մը, որ զինք պաշտպանէր» (էջ 481)։*

*Ծերենցը, դատապարտելով ներքին երկպառակութիւնները, ինչպէս «Երկունք»-ում, այնպէս էլ այս վէպում առաջ է քաշել ազգային միասնութեան գաղափարը՝ իբրեւ հայրենիքի անկախութեան գլխաւոր նախապայման։ «Այդ նախարարական իշխանութիւնը, որ մեծ եւ պզտի բռնաւորութեանց բաժանելով երկիրը կենտրոնական իշխանութիւն կը տկարացնէր, եւ այդ բռնաւորները գործիք կ՚ընէր օտարին բանսարկութեանց եւ միջամտութեանց»,- գրում է Ծերենցը (էջ 482)։ Հեղինակը կարծում է, որ նախարարների անմիաբանութեան հետեւանքով է, որ Հայաստանը կռուախնձոր էր դարձել արաբական եւ բիւզանդական պետութիւնների ձեռքին. եթէ նախարարները միաբանէին, ստեղծէին մի ամուր միասնական իշխանութիւն, ապա թշնամին երբեք չէր կարող ոտնակոխ անել հայոց աշխարհը եւ բնաջնջէր անմեղ ժողովրդին։ Այս գաղափարն ընկած է Ծերենցի բոլոր վէպերի հիմքում. այն իր լայն լուսաբանութիւնն է ստացել նաեւ «Թէոդորոս Ռշտունի» վէպում։*

*Գրողը խստօրէն քննադատում է աւատատէր իշխանների տարանջատուածութիւնը, նրանց գաղտնի համագործակցութիւնը արաբական իշխանութեան ներկայացուցիչների հետ, ժողովրդի ճակատագրի հանդէպ նրանց ունեցած անտարբեր վերաբերմունքը։ Նա ցոյց է տալիս, թէ ինչպէս նախարարներից շատերը թշնամու հետ միասին ճնշում ու հարստահարում էին ժողովրդին՝ օտար մեծամեծների աչքում իրենց դիրքն ու հեղինակութիւնը բարձրացնելու համար։ Հեղինակի բնութագրմամբ՝ ազգադաւ նախարարները ժամանակի ամենայետադիմական ուժերն էին, որոնք, հակադրուելով կենտրոնաձիգ առաջադէմ ուժերին, ոչ միայն խանգարում էին երկրի կենտրոնական ուժեղ պետութիւն ստեղծելուն, այլեւ նպաստում ներքին ուժերի ջլատմանը, հնարաւորում թշնամուն հեշտութեամբ կենսագործելու իրենց նուաճողական ծրագրերը։ Ծերենցը, քննադատական վերաբերմունք հանդէս բերելով դաւաճան իշխանների նկատմամբ, ընդհանուր գծերով մերկացնում է նրանց ոչ միայն կենտրոնախոյս ձգտումները, այլեւ դասակարգային-շահագործողական էութիւնը։ Անգթօրէն ճնշելով ժողովրդական զանգուածներին՝ նրանք ոտնահարում էին ժողովրդի իրաւունքները, եւ վերջինս, «Ոսկւոյ եւ արծաթի հարկապահանջների տակ կքած», կրկնակի ենթարկւում էր աւատական բռնութեան օրէնքի նուաստացուցիչ ազդեցութեանը։ «Կային ժամանակներ,- գրում է Ծերենցը,- որ նախարարական ձեռքը այն աստիճան կը ծանրանար ժողովրդեան վրայ ոսկւոյ եւ արծաթի հարկապահանջներ դնելով, որ հեղինակ մը կը նմանեցնէ այդ խեղճ շինականը, այսինքն ժողովուրդը «մարդու», որ կ՚ընկնի ի ծով հնարք չի գտնէր ելլելու, «հիւանդի», որ ցավէն տագնապեալ խօսելու նաեւ կարողութիւն չունի» (էջ 481)։*

*Ծերենցի կարծիքով՝ հիւանդ ժողովրդի վէրքերը բուժելու համար անհրաժեշտ էր հեռանկարային լայն գործունէութիւն ծաւալել, որի հիմնական նպատակը պէտք է լինէր կրթել եւ դաստիարակել հայրենակիցներին՝ բարձրացնելով նրանց ազգային ինքնագիտակցութիւնը։*

*Կենտրոնախոյս ուժերի պառակտիչ քաղաքականութիւնը ցոյց տալով՝ վիպասանը զուգահեռ է անցկացրել հայերի ու յոյների պատմական ճակատագրերի միջեւ եւ յանգել այն եզրակացութեան, որ Հայաստանի՝ պետականօրէն հզօր չլինելու հիմնական պատճառը նախարարների վարած կենտրոնախոյս քաղաքականութիւնն է, որը օտարերկրեայ ծանր լծի հետ միասին խանգարում է ժողովրդի միաւորմանը, մինչդեռ*

*յոյների մօտ «ուսմունքը բնական մարդը բարձրացրել է» ազգային ընդհանուր շահերը ճանաչելու եւ համախմբուելու գիտակցութեանը։ «...Հայերը նոյնչափ անմիաբան եղած են, ինչչափ ամէն ազինք,- գրում է վիպասանը,- որ զօրաւոր կառավարութիւն չեն ունեցել երբեք։ Իրենք ոչ երբեք ունեցել են Յունաց պէս 25 տարի քշող քաղաքական պատերազմը Պելոպոնեսեան պատերազմի պէս թէպէտ նախարարութեանց անմիաբանութիւնը յար եւ նման էր այդ Յունաստանի փոքր, փոքր հասարակապետութեանց, միայն այն տարբերութեամբ, որ հոն ժողովուրդն ազատ եւ ամէն բան էր, եւ ուսմունքը բնական մարդը բարձրացուցեր էր, իսկ Հայաստան՝ ժողովուրդը ոչինչ էր, եւ իր բռնաւորներն ամէն ինչ» (էջ 483)։*

*Վիպասանն ընդգծում է, որ միայն կրթութեան ու դաստիարակութեան խնդիրը կարող է ազգային ինքնաճանաչողութեան արթնացման եւ ազատագրական բոլոր ուժերի միաւորման ու համախմբան գլխաւոր ազդակը դառնալ։ Նա ամէն կերպ ձգտում էր կրթութեան ու դաստիարակութեան միջոցով ժողովրդին դուրս բերել իր թշուառ վիճակից։ Ներշնչուելով ֆրանսական լուսաւորիչներից եւ գրողներից՝ Ծերենցը նախ իր հրապարակախօսական յօդուածներում, այնուհետեւ վէպերում արծարծում է այն հարցը, որ լուսաւորութիւնը առաջին եւ ամենագլխաւոր նախապայմանն է ազգային-քաղաքական նպատակների իրականացման համար։ «Ժողովրդական միաբանական ոգի եւ ուսումնարան. այս երկու բան կարող են հայ ազգին կենդանութեան շունչ բերել»,- գրում է նա (էջ 638)։*

*Ծերենցին զբաղեցնող հիմնական հարցերից մէկն էլ բարձրաստիճան հոգեւորականութեան խնդիրն էր։*

*Ներսէս կաթողիկոսը վէպում պատկերուած է իբրեւ հմուտ քաղաքագէտ, հեռատես, փորձառու, խելացի, աշխարհ տեսած, բազմակողմանի զարգացած, եկեղեցական օրէնքների քաջ գիտակ մի անձնաւորութիւն։ Նա հասկանում էր, որ երկիրը օտար ասպատակողներից պաշտպանելու համար առաջին հերթին պէտք էր ամրապնդել հայրենիքի սահմանները, վերականգնել բոլոր այն քաղաքները, որոնք քարուքանդ էին եղել բարբարոսների ձեռքերով, բոլոր եկեղեցիներն ու վանքերը պէտք է վերանորոգուէին. ահա այս նպատակով նա ձեռնարկում է քաղաքաշինարարական մեծ աշխատանքներ։ «...Այրած եկեղեցիները եւ կաթողիկոսարանը ու հիւրանոցը նորոգեց,- գրում է Ծերենցը,- պարիսպներն ամրացուց, պարտէզներ եւ այգիներ տնկեց եւ Գառնոյ գետէ ջուր բերաւ ոռոգելու համար։ Դուին շունչ առաւ կենդանացաւ քանի մը տարուայ համար, աւերակաց վրայ պալատներ, տուներ եւ շուկաներ բարձրացան» (էջ 538)։*

*Եթէ Ներսէս կաթողիկոսի կերպարը վէպի սկզբում բնութագրւում է դրական գծերով, ապա վերջում հեղինակը նրա կերպարը մեկնաբանում է այլ դիրքերից՝ ներկայացնելով նրան այլ հոգեբանութեան եւ վարքագծի տէր մարդու։ Հայոց կաթողիկոսը հայրենասէր է, սիրում է իր հայրենիքն ու ժողովրդին, այդ բանը չի ժխտում հեղինակը։ Բայց ի՞նչ դիրք է բռնում նա հայրենիքը վտանգի մէջ եղած ժամանակ։ Հէնց այս հարցում էլ հեղինակը մեղադրում է նրան՝ հայրենադաւ իշխանների հետ միանալու եւ հայրենիքին ու ժողովրդին դաւաճանելու համար։*

*Թշնամու կողմից սպառնացող վտանգի պահին, փոխանակ իր հայրենիքին ու ժողովրդին օգնի, նա Յովհաննէս կաթողիկոսի նման իր անձը փրկելու համար թողնում է աթոռանիստ քաղաքը եւ Սմբատ Կիւրոպապատի հետ փախչում Տայոց գաւառը՝ պատճառաբանելով, որ իրենք հեռանում են Դուինից ոչ թէ իրենց կեանքի ապահովութեան*

համար, այլ Թէոդորոս Ռշտունու երկիւղից, որ իբր հայոց սպարապետը մի նոր դաւադրութիւն է նախապատրաստել իրենց դէմ։ Թէոդորոս Ռշտունու դէմ յարուցուած մեղադրանքները բոլորովին անհիմն էին, որովհետեւ վէպում ոչ մի տեղ նշուած չէ հայոց զօրավարի կազմակերպած դաւադրութեան մասին. դա Ներսէս կաթողիկոսի կողմից յօրինուած միտք էր՝ վատաբանելու Թէոդորոս Ռշտունուն, քանի որ վերջինս ամէն կերպ աշխատում էր իր ուժն ու կարողութիւնն ի սպաս դնել հայրենիքի պաշտպանութեան սրբազան գործին։

Վէպում ծաւալուող իրադրութիւնների եւ դրանցում հանդէս եկող գլխաւոր գործող անձերի միջոցով Ծերենցը ստեղծում է մի պատմավէպ, որում շօշափում է բազմաթիւ խնդիրներ թէ՛ տուեալ դարաշրջանի հասարակական-քաղաքական կեանքի, թէ՛ հայ իրականութեան մէջ գոյութիւն ունեցող տարբեր դասակարգերի եւ թէ՛ հայ ժողովրդի ճակատագրի վերաբերեալ։

Վիպասանի կերտած դրական հերոսներն ամբողջանում են իրականի եւ իտէալականի, իրենց ապրած դարաշրջանի վշտերի ու պատրանքների, ներկայի ու գալիքի պատկերացումներից։ Գլխաւոր կերպարներին վերցնելով վերնախաւից՝ Ծերենցը հակադրել է նրանց հէնց իրենց դասակարգի մարդկանց հետ, ցոյց տուել, որ նրանք իրենց հոգեբանութեամբ ու բնաւորութեամբ տարբերւում են ազգադաւ նախարարներից, եթէ հայրենասէր իշխաններն իրենց մտքերն ու զգացմունքները միաւորել եւ միասնական ուժերով դուրս են եկել թշնամու դէմ, ապա հայրենադաւ իշխանները իրենց արարքներով միշտ ձգտել են խանգարել նրանց հայրենանուէր գործունէութիւնը։

**Եզրակացութիւն**

Ծերենցն իր երեք վէպերում խստօրէն քննադատել է դաւաճան իշխանների հակաժողովրդական գործունէութիւնը։ Նրանց քաղաքական վարքագիծը բնութագրելու համար հեղինակը առանձնացրել է գլխաւոր յատկանիշները՝ դրանով իսկ հասնելով իւրաքանչիւրի բացասական կողմերի պատկերմանը։ Հայրենիքի դաւաճանները հոգով այլասերուած, բարոյական անազնիւ սկզբունքներով ղեկավարուող անհատներ էին, որոնք, հովանաւորուելով արտաքին թշնամու կողմից, վարում էին կենտրոնախոյս քաղաքականութիւն։

Ծերենցի, Ռաֆֆու եւ Մուրացանի պատմավէպերում ներկայացուած դաւաճան նախարարների, իշխանների ու հոգեւորականների կերպարների համեմատական ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ հայրենիքի, ժողովրդի, կրօնի ուրացումը, օտար բռնակալների հետ դաշնակցելը՝ հակառակ ժողովրդի շահերի, ծանրագոյն յանցանք է՝ դաւաճանութիւն, եւ արժանի է ամենաանողոք պատժի։ Երեք վիպասաններն էլ ձաղկել են դաւաճանութիւնն ու անմիաբանութիւնը եւ դրան հակադրել հայրենասիրութեան ամբողջ վեհութիւնը՝ առաջադրելով ազգային միասնութեան գաղափարը՝ իբրեւ հայրենիքի անկախութեան եւ ժողովրդի ինքնութեան պահպանման կարեւորագոյն նախապայման։

**ՆԵՐՍԵՀ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ**